



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 սեպտեմբերի 2017 թվականի N 197-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի «բ» ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի մի խումբ բնակիչների դիմումները՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Սվետլանա Վարդանյանին 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, Ռուզաննա Ասատրյանին 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, Հովիկ Չիլինգարյանին 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ, Մանվել Գրիգորյանին 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ և Շուշանիկ Խաչատրյանին 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2017 թվականի սեպտեմբերի 26
ք. Հրազդան



Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

Դրամական օգնություն ստացողների ցուցակ



Ը/Ը	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Սվետլանա Վարդանյան	ք. Հրազդան, Երևանյան փողոց, 10 շենք, 5 բնակարան	15 000	
2	Ռուզաննա Ասատրյան	ք. Հրազդան, Վանատուր թաղամաս 241 բնակարան	15 000	
3	Հովիկ Չիլինգարյան	ք. Հրազդան, Կենտրոն, 26 շենք, 33 բնակարան	20 000	
4	Մանվել Գրիգորյան	ք. Հրազդան, Միքայելյան փողոց, 7 շենք, 19 բնակարան	50 000	
5	Շուշանիկ Խաչատրյան	ք. Հրազդան, Միկրոշրջան, 24 շենք, 1 բնակարան	10 000	